## Արձանագրության 4

**Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

07.11.2017թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Է. Շաքարյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Վ. Գուլգուլյան /գնահատող/, Լ. Գևորգյան / գնահատող / Բ. Տեր-Թովմասյան /բացող/, Ս. Գևորգյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կիրակոսյան |

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

---

(Է. Շաքարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակիցների հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

---

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| **Մասնակցի անվանումը** | **Հայտի գնահատականը** |
|---|---|
| «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ | Բավարար |
| «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/14» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

---

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/14» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել.

-1-ին, 2-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին:

-3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ -ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:.*

## 4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման նախագծա-աշխատանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 3-րդ կետում նշված մասնակիցներին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------------------------------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------------------------------- Վ. Գուլգուլյան

---------------------------------- Լ. Գևորգյան

---------------------------------- Բ. Տեր-Թովմասյան

---------------------------------- Ս. Գևորգյան

Քարտուղար՝ ---------------------------------- Ն. Կիրակոսյան